

Լեզուի ԱԲԱՆԱԿԱՆ
STUDI LINGUISTICI

ԵՂԻԱ. ՏԷՄԻՐԾԻՊԱՅԵԱՆԻ ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայ մտքի ամենախնդնատիպ գէմքերից մէկի՝ արեւմտահայ գրող, հրապարակագիր, իմաստասէր, մանկավարժ, խմբագիր Եղիա Տէմիրճիպաշեանի ծննդեան 170ամեակը լրացաւ 2021 թուականի Մայիսին: Այսօր արդէն անհանդուրժելի է, որ Եղիայի (ի գէպ, ոչ միայն նրա, այլեւ մի շարք այլ մեծերի) անձն ու գործը տասնամեակներ շարունակ դուրս է մնացել հայրենի գրական-մշակութային գարգացման հիմնուղուց: Բաւական է ասել, որ մեծանուն գրողի մահից մէկ դար անց ժամանակի գրական մամուլում սըփուուած նրա բազմաթիւ ու բազմազան գործերից ընթերցողների սեղանին է դրուել քիչ թէ շատ ամբողջական ընդամէնը չորս ժողովածու՝ «Արձակ Էջեր, նամակներ, քերքուածներ» (Փարիզ, 1955), «Երկեր» (Երեւան, 1986), «Հրայր մուրին» (Իսթանպուլ, 2008), «Անգենն երգ» (Երեւան, 2015): Գրողի անձի ու գործի ամբողջական պատմութիւնը նոյնպէս դեռեւս սպասում է իր նախանձախնդիր հետազոտողին: Մինչդեռ Եղիա Տէմիրճիպաշեանը առանձնայատուկ երեւոյթ է հայ գրականութեան պատմութեան եւ, մասնաւորապէս, ԺԹ. դարի վերջին քառորդի մեր ազգային-հասարակական, կրթական-մշակութային գարգացման ծիրում:

Եղիա Տէմիրճիպաշեանի գրական բազմատեսակ վաստակի մէջ իրենց ուրոյն տեղն ունեն արձակ բանաստեղծութիւնները, որոնց մի քանի նմոյշները, անկասկած, տուեալ տեսակի ամենանշանակալից արժէքներից են:

1897-1898 թուականներին՝ տարիներ շարունակ նեարդային ծանր հիւանդութեամբ տառապող Եղիան շրջագայութեան է մեկնում եւրոպական մի շարք երկրներ՝ Շուեյցարիա, Աւստրիա, Հունգարիա: Գրողի ազգականուհու, բանաստեղծուհի Զարուհի Գալեմքեարեանի վկայութեամբ, մեկնումը տեղի է ունեցել նաեւ «քժիշներու խորհուրդով», թէեւ ազգականուհին ցաւով է նշում,

որ դա չի օգնել Եղիային, քանզի, «հոն ալ իր ցաւը անբուժելի մնաց»¹: Այնուամենայնիւ, Կ. Պոլիս վերադառնալուց յետոյ նա դարձեալ սկսում է ժրաջանութեամբ մասնակցել գրական կեանքին, տպագրուել մամուլում՝ այս անգամ գլխաւորապէս 1896ին Բիւզանդ Քէչեանի հիմնած եւ արդէն որոշակի հեղինակութիւն վայելով «Բիւզանդիոն» ազգային-քաղաքական, գրական-գիտական օրաթերթում»:

1898ի աշնանն ու 1899ի սկզբին Եղիա Տէմիրճիպաշեանը «Բիւզանդիոն»ում հանդէս է գալիս չափածոյ բանաստեղծութիւններով, արձակ բանաստեղծութեան շարքերով, էսսեներով, լեզուի, գրականութեան հարցերի շուրջ տեսական յօդուածներով եւ նոյնիսկ երգիծական բնոյթի ծաւալուն հրապարակմամբ... Մի քանի հրապարակումներում ուշագրաւ են յատկապէս ճամբորդական տպաւորութիւնները, զգացողութիւններն ու մտորումները, որոնք ուղեգրութիւններին յատուկ սոսկ նկարագրութիւններ չեն, այլ խորունկ հոգեվերլուծական արձակ բանաստեղծութիւններ՝ ոճական, լեզուապատկերային հրաշալի արտայայտչամիջոցների օգտագործմամբ, որոնք առիթ են տուել անկեղծ հիացմունքի բազմաթիւ վկայութիւնների: Բնորոշ են, օրինակ, Տիգրան Կամսարականի հետեւեալ տողերը՝ «ի՞նչ թոխներ ունի այդ լեզուն, իր ոճն ի՞նչ կոհակներ ծփուն եւ մերթ ամենի, որոց վրայ կը տարութերի իր ամէն հողմոց մատնուած միարիմ հոգին...»²:

Այդպիսի մի հրաշալի նմոյշ է «Մեր Պոսֆորը»³:

«Հո՞ն, սիրելի՝ հոն կ'ուզեմ որ տանիս զիս» կը հառաչէի հեռու Պոսֆորին ափերէն», խոստովանում է բանաստեղծը եւ ապա բացատրում, թէ ինչու: Որովհետեւ, նախ՝ «Երկնակամարին վրայ, երկնից անահման տարածութեան մէջ, երկու արեգակներ երբեք այնքան կապուտագեղ ու ձեւագեղ անջրագետով մը բաժնուած չեն իրարմէ ո՛րքան արեգակնախառ այն երկու աշխարհներն, Եւրոպան եւ Ասիան, զորս կը բաժնէ Պոսֆոր»: Դա առարկայական իրականութիւնն է: Բայց կայ նաեւ իր՝ բանաստեղծի՝ ընկալումը, որն արդէն աւելի ենթակայական-զգացմունքային է. «...կապոյտն ո՞ւր

1 ԳԱԼԷՄՔԵՍՐԵՍՆ, Զ., Եղիա Տէմիրճիպաշեան, ի «Ամահիտ», 1931, Փարիզ, թիւ 5-6, 107:

2 ԿԱՄՄԱՐԱԿԱՆ, Տ., Եղիա Տէմիրճիպաշեան (Գրասէր Ատու), Կ. Պոլիս, ի «Մասիս», 1892, թիւ 3956:

3 Տե՛ս «Բիւզանդիոն», 1898, օգոստոս 5/17: Մէջքերումները տրում են ՏէՄՄԻՐՃԻՊԱՇԵՍՆ, Ե., Անգեղմ երգ, Երեւան 2015, ժողովածուից:

աւելի կապոյտ է քան Պոսֆորն»: **Իսկ որպէսզի պատկերացնենք նման պնդման բուն խորքը, պէտք է հասկանանք, թէ ի՞նչ է «կապոյտը» Եղիայի համար՝ դա «սիրոյ՝ բանաստեղծութեան», «աստուածուիներուն աչքին», «աստեղաց աստուածամերա յատակին», «խունկին վերածխութեան», «լեռնային հարսանց արծաթ պսակի թելերուն», նաեւ՝ «Մի՛ մոռնաֆ զիս» ծաղկի ու զանգապանի գոյնն է... Այսինքն՝ Երկնային ու Երկրային բոլոր գեղեցկութիւնները միաւորող կապոյտը... Հնդ որում Բոսֆորի այդ գեղեցկութիւնն ամենեւին էլ Եղիայի յայտնագործութիւնը չէր՝ «Կ'ըսէին, կը գրէին, կ'երգէին աշխարհի մէկ ծայրէն միւսը. "Գեղեցիկ է Պոսֆոր", գրում է նա: Բանն այն է, սակայն, որ կարծել է, թէ այն միակը չէ, որ «աշխարհ ունի դեռ շատ ու շատ Պոսֆորներ»: Աւելին՝ «եթէ Կոստանդնուպոլսէն քանի՛ մարդս հեռանայ՝ աշխարհ այնքան ըստ ամենայնի կը գեղեցկանայ...»: Բայց երբ երկու անդամ արցունքն աչքերին («Երբ առաջին անգամ հեռացայ Բիւզանդիոննեն, սիրտըս փլաւ, աչուրներէս հեղեղներ իշան...») հեռացել է «եզական ծննդավայրէն», երբ «ուրիշ կապոյտ ջուրեր», «ուրիշ ենրմակ կայֆեր», «ուրիշ երկիր եւ ուրիշ երկին» է տեսել, ստիպուած է եղել դարձեալ բացականչել հառաչաճայն՝ «Հո՛ն, սիրելի՛ս, հոն կ'ուզեմ որ տանիս զիս»⁴:**

Հնդհանուր այս գնահատութիւնից յետոյ անցում է կատարւում Բոսֆորի գեղեցկութեան աւելի առարկայական, մանրամասն նկարագրմանը՝ պատկերաւոր խօսքի ամբողջ զինանոցի օգտագործմամբ. «Միշերկրականնեն կու գաս: Վերադարձն է. նաւն Արքիպելագոսի եւ Խշխանաց կղզիներուն մէջէն անցած է. /.../ նաւն Այսթիքանյին առջև հասած է:» Խօսքն աստիճանաբար ձեռք է բերում պատկերաւոր ոճաւորում, ուր յիշեալ կղզիները նման են «կանանց անշարժ նաւերի», թէեւ՝ կապոյտ ջրերի վրայ «յարածան ու յարաբոյր»: Հրաշալի է ոչ միայն ցերեկային, այլեւ գիշերային Բիւզանդիոնի կերպարանքը՝ աջում Ասիական, ձախում Եւրոպական եզերքներով, որոնցից իւրաքանչիւրի վրայ բարձրացող փարսոները նման են աչքերի, որոնք ընդհանուր պատկերի մէջ «մէկ դէմք, մէկ կերպարանք կը կազմեն. Երկու աշխարհները մէկ հոգի, մէկ մարմին կ'ըլլան»: Բայց դա եւս բաւարար չէ. բանաստեղծի ընկալումը շարունակում է խորանալ մինչեւ բնութեան փոքր ու մեծ ոլորտների մարմնական ու հոգեկան մակարդակների միասնութիւնը՝ «Ու երկինք ու երկիր իրարու կը միանան: Սեւ ծովէն աղջամուղը կը հոսէ կը խառնուի գիշերուան խաւարին. Միք կաթին լոյսը կը հոսէ կը խառնուի կմենայ պալատանց ու փարոսներու

փողփողմանց»⁵: *Լոյսի ու խաւարի յաւերժական այդ պայքարի մէջ, սակայն, չի յաղթւում «կապոյտը Պոսֆորին, ընդհակառակն, անբաղդատելի ներդաշնակութիւն մը յառաջ կու գայ գունոյ:* Ու կը հարցնէ մարդ ինքնին, «Գիշե՞րն աւելի՝ թէ ցերեկը գեղեցիկ է այս անմանակ բաղաբը»: *Ահա թէ ինչու անսահման, անթերի, կատարեալ է նաեւ այդ գեղեցկութիւնից ստացած բանաստեղծի գեղագիտական հաճոյքը՝ «Երա՞զ է թէ իրականութիւն, Աստուածի իմ...,- բացականչում է նա,- Եւրոպայի մէջ գեղագիտական ա'յսքան ներոյժ հանոյվ առթող վայր մը գտի՞ր»:* *Մանաւանդ որ «քնութեան գերն» այստեղ կրկնաւորուած է «պատմութեան գեղով»: Պատմական հպանցիկ մի ակնարկով Եղիան ցոյց է տալիս, թէ ինչպէս է քաղաքակրթութիւնը, «որ Աթենքն գացած է Հռոմ», այնուհետեւ՝ «հարաւէն» երկայնութեանց օրէնքին հետեւելով՝ եկած է Աթենք», ճանապարհին ընդգրկելով Արեւելքի շատ երկրներ ու ժողովուրդներ, ի վերջոյ, հասնում Բոսֆորի հրաշագեղ ափերին կառուցուած Բիւզանդիոն՝ «հաստատուն, յաւիտենական բաղաբն. ա'յն որ Աթենքի բաղաբակրթութեան ժառանգորդն եղաւ, ինչպէս որ իրմէն ալ ժառանգեցին բաղաբներ այնքանի՝, բովանդակ Եւրոպան»⁶:*

Աւելի ուշ Եղիա Տէմիրճիպաշեանը գրել է. «Մեր Պոսֆորը» վերնագրով եւս երկու գործ: Երկրորդը, որ ներառուել է «Անգեղն Երգ» ժողովածուում, ըստ վերջում դրուած թուականի, գրուել է 1901ի Ապրիլի 29ին, Եէտի-Գուլէ հիւանդանոցում, ժողովածուն կազմողների (Ս. Դոյյեան, Ս. Տէյիրմէնձեան) ժանօթագրութեան համաձայն, «տպագրուում է առաջին անգամ», ինքնագիրը պահւում է Երեւանի ԳԱԹում, «Եղիա Տէմիրճիպաշեանի փոնդում (թիւ 9)»: Երրորդը, որի մասին բանաստեղծը յիշատակում է «Մանգումէի Էֆենար» թերթում տպագրուած «Մայսավերջեան օրագիր»ում (6 Յունիս), ըստ նոյն աղբիւրի, հնարաւոր չի եղել գտնել⁷:

«Մեր Պոսֆորը» Երկրորդ արձակ բանաստեղծութեան մէջ Տէմիրճիպաշեանը, ըստ էութեան, շարունակում է կերտել Բոսֆորի գեղարուեստական կերպարը, նախորդ ասուածին աւելացնելով նոր գոյներ ու երանգներ: Այստեղ Բոսֆորը հանդէս է գալիս նոյնիսկ... բանաստեղծի կերպարով, որ, ըստ նրա, «բիւր անգամ կը գերազանցէ» Լոնգֆելլոյի և Եղգար Պոյի նման «մեծահանեար» քերթողներին: Քանզի անօրինակ է ու ինքնաստիպ՝ «Ինքն իր բնարն

5 Անդ, 249:

6 Անդ, 250:

7 Անդ, 422-423:

եւ ինքն իր նուագն է անի: Աշխարհիս չափ ծեր է, եւ այս առաւտեան նորածինն չափ մանուկ: Գոյնը կը փոխուի երկնքին հետ, ձայնը կը փոխուի երկնից շողին հետ: Եւ երկնակապոյտ աչքի գոյնն ունի իր մարմինը, իսկ իր հոգին ամենէն փափուկ եւ ամենէն խուսափուկ բանն է որ ըլլայ տիեզերաց մէջ»: Նրա նուագը նման չէ ոչ մէկին, քանզի մէկտեղում է իր մէջ հրուանդաններին բախուող «մողն-չիւնն» ու խորչերի մէջ մարող «մրմունջը», որոնք, ի դէպ, եւս ունեն իրենց ներքին նրբութիւնները՝ «Մրմունջը մարող՝ ուրիշ ճայն ունի, մրմունջը յառնող՝ ուրիշ ճայն: Մոնչիւնն օդարշաւ՝ ուրիշ ճայն ունի, յօրինէ, մոնչիւնն հարուարադի՝ ուրիշ ճայն»: Ահա թէ ինչու Արարիչն երկու ականջ է պարզեւել «արարածոց»՝ «այդ նուագներու այլարանութիւնը» ունկնդրելու եւ ինքնատիպ համերգի «ուրոյն ըմբռնումին» համար⁸:

Բոսֆորի գեղեցկութիւնը համեմատելով նաեւ երկնային Ծիր կաթինի հետ, Եղիան այն աւելի «կենդանառոյգ», աւելի «քմա-յիկ ու հմայիկ» է գտնում, որի «փրփրալող» ալիքները մըցում են Ծիր կաթինի «կարճաթոյը» աստղերի հետ, իսկ Բոսֆորի նուագը, «որ Ծիր կարինին կը պակսի», անկրկնելի է ու որեւէ քնարի հետ անբաղատելի: Ուրեմն եւ՝ պարզապէս հռետորական է հարցը, թէ «Ծիր կարինն անյարիր, միօրինակ, աննուագ աղօտ պատկերը չէ՞ Պոսֆորին»:

Թուում է, անսպառ է Եղիայի համեմատութիւնների պաշարը: Փոքրիկ այս գրութեան մէջ նա դեռ շարունակում է Բոսֆորը նմանեցնել «անտես հրեշտակի մը» կապուտակ թեւին, որ «Ասիոյ ներովիոյ միջակետին վրայ յաւերծ կը հանգչի բարախուն ու դողդոշուն», «երկնից իննեակ յարկաց իններանգ կապոյտին, որուն հիւրը կը կազմեն անուրջներն ոգիներուն անմարմին» եւ դեռ «կոչտ քարերու տեղ» Բոսֆորը «գոհարներ» է թաւալում իր լանջերին: Համեմատութիւնները՝ մէկը միւսից տպաւորիչ ու ինքնատիպ, թաւալգլոր յաջորդում են իրար՝ Բոսֆորը համեմատելով «անհուն եւ անմահ» սիրոյ լացի արտասուքի, աստուածների կեանքի «քանձանականական» պատկերի, «սիրոյ անուրջի» եւ «ասրացեալ կամ այլարանական» պատկերի, գուգաւորումից՝ «գերանրջային փրփրահուր այդ յլացման» արդիւնքում ծնուած պտուղի հետ... Համեմատութիւններ, որոնք ամենեւին էլ ինքնաբաւ ու ինքնանպատակ չեն, այլ օժտուած են ներքին կուռ կառոյցով, ունեն վերասլաց չեն, այլ օժտուած են ներքին կուռ կառոյցով, ունեն վերասլաց բնոյթ՝ ներքեւից վերեւ, երկրից երկինք, ստորոտից գագաթը,

հոգուց դէպի ոգի, այդ ընթացքի աւարտը ազդարարելով՝ բառերի, պատկերների եւ հնչիւնների ներքին միասնութիւնը, ներդաշնակութիւնը խորհրդանշող հզօր վրձնահարուածներով։ «Ու բոլոր այն երգերուն զորոնք մանկութենես ի վեր ինձ լսելի ըրիք, ո՞վ իմ Պոսֆոր, բոլոր այդ երգերուն համաձայնութիւնն է – Սէր եւ Աստուած»⁹։

Առաջին «Մեր Պոսֆոր»ից մէկ ամիս անց Տէմիրճիպաշեանը հրապարակում է «Հանդէպ լերին» արձակ բանաստեղծութիւնը¹⁰, որն արդէն ամբողջապէս վերաբերում է բանաստեղծի շվեյցարական տպաւորութիւններին։ Այդ անցումը, սակայն, շատ սահուն է ու դիպուկ։ գրուածքն սկսում է Բոսֆորի ու Լեմանի՝ այդ «զոյգ անդիմադրելի գեղուիհիներու» քնարերգակ հրաշալի համեմատութեամբ։ «Մեր Պոսֆորին հակառակ, որուն ծայրերը ծովու մը մէջ կը լայնենան ու կ'անհետանան, - գրում է Եղիան, - Լեման՝ եռօղակ եռագունակ լին երկայն՝ երկու ծայրերուն կ'անձկանայ կը գետանայ ու կ'երթայ մինչեւ ամպերուն մէջ կ'աներեւութանայ։ Երկու մարմինի մէջ ոլոր մոլոր երկնցող թե՛ւ մըն է Պոսֆոր, լուրթ – ու – վարդ – ու – կաթ աղջիկ մանուկ մը՝ մանկագեղ մօրն ու հօրը մէջտեղ խաղաղուարն խայտագին։ ծովաշեալ աստուածուիւյ ծփանոյշ ծալի մարմին մըն է Լեման, որ լրթագոյն վարդագոյն կրկին առուաթեւերը լեռնէ լեռ կ'երկնցնէ ու կը բարձրացնէ մինչեւ ամպերը։ Առաջին հայեացքից նկատելի այդ տարբերութիւն – հակադրութիւնը, սակայն, ըստ էութեան, թուացեալ է, քանզի խորքում, էութեան մէջ բնութեան այդ գեղեցկութիւններն ընդհանուր են ու միասնական։ Որովհետեւ, բանաստեղծի արդէն հոգու աչքերով դիտուած, «Պոսֆորն ալ ամպերուն եւ աստղերուն կը խառնուի՝ Պոնտոսը պարարող մշտահոսան մեծ գետերուն թեւերովն, եւ Միջերկրական Ովկիանոսով ալ անհուն տարածութեան կը սահմանակցի կոհակներուն արձարօղակ անվախնա՞ն շղթայաճգութիւնով»։ Արդիւնքում՝ «Հո՛ս թէ՛ հոն, թափանցիկ ո՛րքան թափանցիկ գեղով մը կը ներկայանայ Բնութիւնն...»¹¹։

Բայց կայ նաեւ մէկ այլ՝ ոչ պակաս տպաւորիչ համեմատութիւն՝ լիճն ու լեռը, Լեմանն ու Մոն-Պլանը... Լեմանը՝ «կենդանի՝ քերթուած», որի կոհակը, գեղն ու հրապուրը վախճան չունեն, եւ Մոն-Պլանը, այդ հրաշալի լեռնաշարը, որ նման է «տիտանական

9 Անդ, 286-284:

10 Տե՛ս «Թիւզանդիին», Սեպտ. 25/5, Հոկտ., 25/6, 1898: Այստեղ մէջբերումները տրուում են ըստ «Անգեղան երգ» ժողովածուի։

11 Անդ, 253:

ուղտերու-խնկարոյր ադամանդակի՞ր ուղտերու-յոգնահոյլ երամակի մը»: «Գեղեցիկ ափեր ու գեղեցիկ լեռ. Լեմա՞ն ու Մօն-Պլա՞ն: Ո՞չ այդ լին սկիզբ ունի, ո՞չ այդ լեռը վախճան», հիացմունքով բացականչում է Եղիան: Բայց, միեւնոյն է, այդ նմանութեան՝ «տեսանելի» գեղեցկութեան խորքում բանաստեղծի աչքը նկատում է նաեւ «անտեսանելին» թէեւ «խաղաղաւէտ ու կապուտակ, գեղեցիկ է Լեման, ոսկի կամ դալար, աւազածիր կամ անձաւածիր իր շրջանակին մէջ», բայց նաեւ՝ «ի Զուիցերիա Լեմանէն վեր բան մը կայ, Մօն-Պլանը. գեղեցիկէն անդին բան մը կայ, վսե՛մը»¹²: Այսինքն՝ բանաստեղծի աչքը նկատում է ո՞չ միայն մակերեսը, այլեւ խորքը, ո՞չ միայն հորիզոնական տարածուողը, այլեւ ուղղածիդ գահավիժողն ու վերասլացիկը... Եւ դա հէնց նրա իւրայատկութիւնն է, որով բանաստեղծը տարբերում է սովորական մարդկանցից: Բը-նորոշ է գրուածքի դրուագներից մէկը, ուր բանաստեղծը պատմում է չնաշխարհիկ բնութեան մէջ «ներմակ մօրուօֆ մարդուկի» հետ հանդիպման մասին: Վերջինս, տեսնելով բանաստեղծի վերացած հոգեվիճակը բնութեան շրջապատող հրաշալիքների հանդէպ, ձեռքը դնելով նրա ուսին, առաջարկում է՝ «միայն յիսուն սանդիմ վեարելով», օգտուել իր «հեռադէտից» - հեռադիտակից - Մոն-Պլանն աւելի լաւ տեսնելու համար: Եղիայի արձագանքը, սակայն, ոչ միայն անհասկանալի, այլեւ, թերեւս, վիրաւորական կարող էր թուալ նրան, եթէ արտայայտուէր բարձրածայն: «Յիսուն սանդիմ առնե՛ս ու մեծ լեռն աչքիս քաղքնենի բա՞ն մը պիտի ընես,- ներքուստ ընդվզում է բանաստեղծի հոգին: Ապակիդ, որքա՞ն ալ հզօր ըլլայ, կրնա՞յ միթէ բաղդատուիլ երեւակայութեանս աչքերուն: Հեռադէտովիդ դուն իմ տեսածս կրնա՞ս տեսնել, խե՛ղն մարդ...»¹³:

Բնութեան գեղեցկութիւնը, սակայն, ամենեւին էլ ինքնաբաւ չէ, ինչպէս կարող է թուալ առաջին հայեացքից: Այն բովանդակաւորելու համար մեծ դեր ունի նաեւ կենդանական աշխարհը, մարդը: Քանզի, ինչպէս արդէն ասուեց, «տեսանելի» գեղեցկութիւնից բացի, կայ նաեւ բնութեան (տուեալ դեէպքում՝ Լեմանի) «անտեսանելի» կամ տեսլական գեղեցկութիւնն, որ մարդկային հանարկն, որ հոգիէն, որ բանաստեղծութենէն քեզ կու գայ», սահմանում է Ե. Տէմիրճիպաշեանը, եւ իր այդ համոզմունքը հիմնաւորում հրաշալի մի հատուածով: «Սէրը բարախեց, թախիծն հեկեկեց, անյուսութիւնն հառաջեց, պատրանքը մնչեց ու կորանքը մոնչեց.

12 Անդ, 255:

13 Անդ, 259:

մահն իր ստուերը՝ մահիկն իր պաղպաջումը տարածեց ալեացդ ու ափանցդ վրայ»: **Եւ ահա, այդ ամէնի հետեւանքն են լճի կոհակների համերգի** «յոգնաձայնուրիւնն լայնարձակ ու խորին, մեղրանոյշ ու դառնագին, փայփայիկ եւ աղեկիզիկ, խաւարուտ եւ կամ լուսավանկ, գողտր ու թէ գոռ, խաղաղաւէտ թէ փոքորկայոյզ, թելաղրիչ կամ լիացուցիչ, դաշն եւ գրեթէ լուր եւ մերք դղրդագին ահագնալուր»: **Իսկ ո՞ր թռչունը դադար չի առել լճի ափերին, ո՞ր հողն իր փոշին չի խառնել նրա աւազին, ո՞ր հողմն իր շունչը չի ընծայել լճի առագաստին, ո՞ր հեղեղն իր փրփուրը չի խառնել նրա փրփուրին...** Ահա թէ ինչու բանաստեղծի համար Լեմանը սոսկ գեղեցիկ լիճ, բնութեան մի սքանչելի բեկոր չէ, այլեւ «Հեղուկ մատեա'ն անսահման», որի էջերից ու տողերից շա՛տ ու շա՛տ իմաստութիւններ են պատմում նրա կոհակներն ու «յարամոռունչ ափերը»: **Եւ այլեւս միանգամայն տրամաբանական, սպասելի է հնչում բանաստեղծի հուետորական հարցը՝ «Խորքդ ի՞նչ կը խորիին, բարձունեցդ ի՞նչ կը բացագանչեն, ո՞վ լին...»¹⁴:** Կարծում ենք, այս տողերում որոշակի է նաև Լամարտինի «Լինը», Պ. Դուրեանի «Լինը» քերթուածների արձագանքը:

Եւ վերջապէս, բնական ի՞նչ գեղեցկութիւն, առանց կնոջ... Ու յայտնուում է նաև «Յերմակ կիներու բոյլը», որ «կը սուրայ ալեաց վրայ, /.../ Ալպեանց ներմակ տոհմածաղիկ ետքվայսը սեւ երկայն մազերուն վրայ՝ ներմա՞կ կիները, ներմակ հողմածան շղարշներու շուշանափայլ նոխ ճիւնագիսակ մօղերո՞ւն մեջ ետեւնին»¹⁵: **Եղիան խոստովանում է,** որ իր՝ «երազներու ու երազային տեսիլներու հակամէտ ջլախտաւորի», երեւակայութեան ծնունդն են նրանք՝ «չնաշխարհիկ կանանց», «իրականութեան ու գրականութեան խարիթայից» այդ բոյլը, որոնց մօտ նսեմանում են նոյնիսկ «դիցարանութեան խարիթայիք»¹⁶: «Երեք գրեթէ հակոտնեայ աշխարհներու գեղն ու դրոշմն» են կրում նրանք իրենց աչքերի մեջ... Աւելին՝ «Տարաշխա՞րին է, անծանօթ երգն եւ անծանօթ երկինքն է որ կը վառի եւ որ կը խաւարի, որ կ'աստեղագարդի եւ կ'ամպակուտակի, որ կը խորիի ու կ'երկրայի ու կը յուսահատի, ու նորոգ յոյսով ու նորոգ հաւատով ու նորոգ սիրով վերստին կը վառի կը խանդավառի միւսին աչացն ու հոգւոյն մեջ, շրթանցն ու նակատուն վրայ»: **Ե. Տէմիրճիպաշեանի համար «չնաշխարհիկ կանանց» այդ տիպարները նաև որոշակի անուններ ունեն՝ վերցուած վիպապաշտութեան եւ**

14 Անդ, 258:

15 Անդ, 259:

16 Անդ, 256:

խորհրդապաշտական գրականութեան յայտնի կերպարներից՝ «Նոր էլօիզ, Գոյին, Ժիւլի. ի՞նչ անուններ, ի՞նչ էակներ, ի՞նչ թագաւորութեանց թագուհիները: Միրուած առհասարակ բոլոր ժողովուրդներէն որոնք գիր ունին, երկրպագուած ամենամեծ բանաստեղծներէն որոնք գերահրայրին ունեցան, եւ պակուած՝ ամենէն առաջ՝ աստուածոց Աստուած Տէր թագաւորէն»¹⁷: Նման հոգեպարար իրավիճակում այլեւս պատահական չէ, որ Եղիան եւս մտնում է երեւակայական այդ Խաղի մէջ, դառնում պատումի հերոսներից մէկը. «Ու անոնցմէ մին, ամենէն տեսլագեղն, ամենէն հոգեպարարն, ամենէն հրեշտակայինն,- ոգեշնչմամբ գրում է նա,- նշա՞ն կ'ընէ բանաստեղծին: Աչքի պատրանենով, սպիտակ ցոլացումներուն բլշացումովն անտարակոյս Ռաֆայէլը կարծած է զիս...»¹⁸:

Եւ դարձեալ, ինչպէս եւ նախորդ գրութեան մէջ, «Հանրէալ լերին»ն աւարտում է շեշտ ու հնչուն՝ վերասլացիկ տողերով. «Այդ դրախտային բիւրասքա՞նց քնութեան ծոցն, ուր լնափունքն աստիճանաւորմամբ կը բարձրանան՝ մինչեւ հողը ձիւն կ'ըլլայ ու մինչեւ ձիւն ամպ կամ աստղ ու մինչեւ աստղն հոգի՝, շրբունքս վա՞նկ մ՞ունեցան – սէր – սիրտս հծծի՞ւն մը – Յուլիա, եւ հոգիս աղաղակ մը – ԱՍՏՈՒԱԾ»¹⁹:

Մի քանի գրուածքներում Տէմիրճիպաշեանի սեւեռակէտում են կեանքի ու մահուան խորհրդի, մարմնի եւ հոգու, երկրային գոյութեան եւ երկնային արքայութեան համանելու ուղիների մասին մտորումները, որոնք եւս մատուցում են բանաստեղծական հոգու ոսպնեակով անցկացնելուց յետոյ: Այդ շարքից են, օրինակ, 1898ի վերջին, 1899ի սկզբին հրապարակուած «Վեհանոյշը», «Հայոց Միրիկը»: Առաջինը յուզիչ պատմութիւն է երիտասարդ, բայց անըութելի հիւանդութիւնից յետոյ մահկանացուն կնքած գեղեցկուհու մասին՝ նրա, աւա՛ղ, արդէն անշունչ մարմնի առջեւ, աղաղակելով, թէ «Ասանկ մարմին ձեւած, ասանկ հասակ ձեւացուցած չուներ Աստուած... իր աշուրներուն սեւը Քերովրէից բուրվառին ածուխն էր, իր աշուրներուն կրակը հրեշտակաց բուրվառին հուրը տերեւներուն վրայ կ'եղանակէր. Պիլապիւլին ու Աշունին ձայնը միացած ու աւելի, կրակն էր...»²⁰: Մակայն բանաստեղծին տանջում է նաեւ հարցը, թէ «Ի՞նչ եղաւ, ո՞ւր գնաց շունչը մեր սիրելիին», նրա, որ

17 Անդ, 257:

18 Անդ, 259:

19 Անդ, 259-260:

20 Վեհանոյշը, ի «Բիւզանդիյոն», Անպտ. 3/15, 1898: Մէջբերումները՝ «Աղցեղմ երգ» ժողովածուից, 244-245:

իրենց «տիրուհի’ն էր», **որ ներշնչել էր իրենց** «ա’յնքան բանաստեղծութիւններ ու ա’յնքան բարի սխրալի գործեր...»: **Եւ մի՞թէ այդ շունչը երբեւէ կարող էր մարել, անհետանալ, այն շունչը,** **որ «մարդերն ու աստուածներն իրարու կը կապէ կենդանագոյն աներեւոյթ կապովն...» եւ որի «շնորհիւ մեր սիրելիին աշուրթերը ժառագին մեզի կ’ակնարկէին ու շուրբերը գորովագին մեզի կը մրմնցէին...»:** **Հարցի պատասխանի որոնումների մէջ, սակայն, ամէնքի աչքերը** «կը բարձրանան երկինք անհամբե՛ր, զանց ընելով փոսին մոայլն ուր բա՛ն մը չի սկսիր երբեք եւ ուր բա՛ն մը չի վախճանիր իրօֆ»: **Ու այլեւս միանդամայն տրամաբանական է թւում հարցի փոխակերպումը՝** «Օդոց լուսատարը ալիքները պատող թուխ կամ ներմակ թեւալուներէն որո՞ւն մարմինն առաւ՝ դէպ իր անեղ բնագաւառն հրեշտակապարիկ իր վերասացման մէջ՝ շո՛ւնչը մեր սիրելիին»: **Քանզի, նոյնքան համոզիչ է թւում նաեւ ակնթարթօրէն հետեւած պնդումը՝** «Այլ միթէ շունչն, իմանալին, տեսանելի մարմին երբեք կրնա՞յ զգենուլ»:

Եւ քանի որ հրաշագեղ կոյսն «ա’լ ինք իր մէջն ըլլալէ դադրա՞ծ է», դաժան այլ իրողութեան հետ ոչ մի կերպ չհաշտուող երիտասարդը, որ անզօրութիւնից սկսել էր նոյնիսկ «քահքահ խնդալ», յանկարծ ծառս լինելով սիրելի կոյսի մահճի վրայ, «երկու դողդոց ոտուրներն իրարու կը կցէ միացնե, երկու ձեռուրները կը բանայ անդնդաշափ», պատրաստուելով նետուել... Ո՞ւր՝ «Խնքն ի’ր մէջ. իր մարմինին մէջ, իր հոգի’ին մէջ, վասնզի անհնարին, զի անհնարին վիշտէն ինենքեցա՞ծ է տարաքա’խտ երիտասարդը»: **Ու «երկու տենդայոյգ ձեռքերովն ի’նչ որ կայ խանդաղատանք աղիքներուն մէջ, երկու լիաբաց շրբունքներովն ի’նչ որ կայ հո՛ւր արիւն իր երակներուն մէջ, երկու բարախուն ոնզունքներովն ի’նչ որ կայ բաշողական զօրութիւն իր հոգիին ու մարմինին ամենախորին աշքներէն: Գլուխէն մինչեւ ոտքերը կը շօշափէ՛ թէ ինք իր մէջէն դուրս ելա՞ծ է»: **Եւ, ի վերջոյ, համոզուելով, որ «Այո՛, ելած է, դուրս է, իր արտաքնօւրեան բովանդակ լրութիւնը կը վայելէ...», այլեւս որպէս աներեւոյթ ու անմարմին հոգի, «կ’իյնայ սիրատարի երիտասարդը՝ կը կպչի սիրելիին ու կը գրկէ՛ զայն, ու կը համբուրէ՛ զայն, ու կը հոտոտէ զայն»: **Որից յետոյ, «չյագեցած, այլ ուժասպառ արդէն՝ կ’ելնէ կը նստի մահինին մէջ, դիակին քովը, գրեթէ դիակնացա՞ծ ինքն ալ...»: **Բայց նաեւ չի հանգչում երիտասարդի հոգու կրակը, նա չի կարողանում հաշտուել սիրելիի անդառնալի կորստեան հետ, եւ «Մոլորահայեա՛ց, մոլորահաձա՛յն, մոլորաքազո՞ւկ, հոս հոն կը պտտցընէ ձայնն ու նայուածքն ու բագուկները՝ նեցարանին անդարմա-********

նելի խորութեանը մէջ ու հորիզոնին անհաւատալի անտարբեր անսահմանութեանը վրայ»: Եւ գոչում է յանկարծ, ներքին վիթխարի ընդգումի ամբողջ ուժով՝ «Տէր-Հա՛յր, ո՞ւր ես: Հաղորդութիւն տուիր հիւանդին. խաչահաճգիստ եկո՞ւր ըրէ ննջեցեալին վրայ: Խաչին երկու թեւերով, ոսկի խաչեր երկու սուր թեւերուն ծայրովն եկուր բա՛ց այս աշուրները, սիրելիիս աշուրները. որովհետեւ անոնք որ չբացուին, անոնք որ չնային, ես ա՛լ աչք չունիմ աշխարիի համար. ճրագս մարած, արեւս խաւարա՛ծ է: Տէր-Հա՛յր, խաչդ խորտակէ՛, կա՛մ խաւարէն լոյս բե՛ր՝ բա՛ց սա աշուրները...»: Մակայն... անզօր է երիտասարդի յուսահատ ընդգումը, ուշացած է նրա հոգու կանչը՝ «Քահանան չ'երեւիր, մահենին մէջ մարմինը չի շարժիր, ա՛հ, ա՛յն աչքը, այն աչքը չի նայիր...»: Ուրեմն... Ուրեմն ի՞նչ... «Պէտք է համակերպի՛լ...»: Դաժան դատավճիռ, դաժան իրողութեան առջեւ: «Հե՛գ երիտասարդն, այն ատեն, երկիւղած ձեռուըներուն մէջ կ'ամփոփէ մահացեալ – այլ անմա՛հ – կուսին սեւ մազերուն գեղագանգուր անտառն, - եզրափակում է եղիան, - եւ՝ անխօս հեծկլտանեով՝ այն սեւ մազերուն սգահամակ անբաւութիւնն ընդ միշտ յաւիտեան կը տարածէ ա՛յն դէմքին վրայ, որուն նմանն եւ ո՛չ լնակ մը ցարդ ցոլացուցած ուներ»²¹:

«Հայոց Միրիէլը»²² գրուածքում հոգու եւ մարմնի, երկրայինի ու երկնայինի փոխյարաբերութիւնը ներկայացւում է աւելի ընկերային խնդիրների շեշտադրմամբ: Եթէ «Վեհանոյշ»ում քահանան չի յայտնուում, ապա այստեղ նա հէնց ինքն է մահուան մահճում՝ «Տ. Խաչատուր Հայր»ը, որ ըստ Արամ Անտոնեանի ծանօթագրման, «Եէնի Գարուի Տ. Խաչատուր Քինյ. Գարրիէնանն» է, որն «ատենին պաշտելի երեւոյթ մը եղաւ Պոլսոյ քահանայական դասին մէջ»²³: Գրուածքի հէնց սկզբից Տէմիրճիպաշեանն ընթերցողին մտցնում է հարցադրումների էութեան մէջ՝ «Տէր-Հա՛յր. Հա՛յր աղքատներուն, ո՞ւր կ'երթաս: Աղքատները դեռ նոյն պէտքերն ունին, աղքատութիւնը չվերցաւ տակաւին, ո՞ւր կ'երթաս»: Հնդ որում, աղքատութիւնը միատարր երեւույթ չէ. Տէմիրճիպաշեանն այն բաժանում է մի քանի տեսակների՝ ըստ այդ երեւոյթը ծնող պատճառների ու հանգամանքների: «Քանի՛ տեսակ աղքատներ, քանի՛ պատճառներով աղքատացեալներ կան ու թերեւս դեռ երկա՛ր ժամա-

21 Անդ, 246-247:

22 ԳՐԱՍԵՐ ԱՏՈՄ, Հայոց Միրիէլը, ի «Բիւզանդիոն», Յունվ. 27/8, 1899: Մէջ-բերումները՝ «Անգեղմ երգ» ժողովածուից:

23 Անդ, 270:

նակ պիտի ըլլան», գրում է նա: Նրա համոզմամբ, դրանք են՝ «Աղքատներ՝ իրենց յանցանենվ»՝ «ամենէն արգահատելի՝ աղքատները», որոնց մտքովն իսկ չի անցնում գործ փնտռել, աւելին՝ իրենց համար գործ փնտռող կամ առաջարկող «քարեսիրտ անձինք» պարզապէս դահճճներ են, քանզի իրենք մշտապէս խուսափում են աշխատելուց, մինչեւ անգամ հիւանդ ձեւանալով, «երբ գործ մը գտնուի վերջապէս իրենց համար», գերադասելով մուրացկանութիւնն ու խաղատներում, գինետներում քարշ գալը²⁴: Նման աղքատների համար Տէր-Հայրը նախ ամաչել է, որ «նոյն մարդկային սեռին կը պատկանին», յետոյ աղօթել Աստծուն, որ ճիշտ ուղղուն վերադառնան, ապա նաեւ ամէն կերպ օգնել դառնալու «աշխատաւէր ու պարկեցտ»՝ «ինչոր հարուստ ըլլալէ աւելի է»:

Ապա՝ «Այլոց յանցանենվ աղքատներ». **Տէր-Հայրն օգնել է նրանց՝ գտնելով յանցաւորին, «որ շատ անգամ... աղքատ մը չէր. ընդհակառակն հարուստ կամ հարստացած՝ այլոց ի վեաս», եւ՝ «արդարութիւն ձեռք քերելէ յուսահա՞տ», գթութեան կոչ էր անում՝ «ստիպելով» դրամական նուրիատուութիւններ անել ի նպաստ աղքատների: Իսկ ստիպելու համար Տէր-Հայրն իր իւրայատուկ գործելառն ունէր. եկեղեցու մէջ իսկ, յանցաւորին հանդիպելով, «վերաբերուի տակէն» հանում էր տետրակը եւ գրանցում անունը՝ սպառնալով հրաժարուելու դէպքում այն յանձնել լրագրերին՝ հանրային պարսաւանքի ենթարկելու: Եւ «ընդհանուր աղքատաց անունով ստացած այդ մէթիսները կամ ուկիներն» տալիս էր ոչ թէ պարզապէս աղքատներին, այլ նման յանցաւորների պատճառով զրկեալներին՝ «յուսադրելով զրկեալն որ՝ օր մը պիտի գար որ մարդ մարդու զրկանք ոչ միայն պիտի չհամարակեր ընել, այլ մանաւանդ պարզապէս զրկանք ընելու անկարող պիտի ըլլար, որովհետեւ Աւետարանին բագաւորութիւնը պիտի գա՛ր»:**

Եւ գեռ, «նակատագրային աղքատներ», որոնց «Տէր-Հայրը պարզապէս յորդորում էր համակերպութեան, քանզի «շուարած, շանքահարուած» այդ մարդիկ անգորութեամբ «չորս դինին կը նայէին թէ հարուածն ուստի՝ կու գար, ի՞նչ անողոք նակատագիր զիրենք այսպէս կը հալածէր»: Նրանք «իիգախ ձեռնարկուի մը» յանդուգն շահաղիտութեան արդիւնքում մէկ օրուայ մէջ «մոխիրի վրայ» նստածներն էին, որոնց միսիթարելու համար «հե՛զ բահնան» այլ խօսքեր չէր գտնում, քան՝ «Մե՛ծ գօրութիւնն Քրիստոսի», միաժամանակ նաեւ ի՛ր «առնական խօսքերով» աշխատում էր կազ-

դուրել հոգիները, յորդորում տոկալ եւ նորից գործել, քանզի հաւատացած էր եւ յուսադրում էր, թէ «Գործ կա՞յ միթէ, որ հաւատին ու յարատեւ աշխատութեան օրութենելն վրիպի»։ Այդպիսիների համար Տէր-Հայրն արդէն ոչ թէ տետրակը, այլ տոպրակն էր հանում «վերարկուի ներքեւէն»՝ «նպաստ մը» սահեցնելով «բարձի մը տակ»։ Բայց «ի՞նչ պաղատաճօֆ» էր ընդունել տալիս այդ նպաստը, որովհետեւ շատերը հետ էին վերադարձնում դրամները, որ «բազմոցին բարձին տակէն գտած էր մայրը կամ աղջիկը՝ աւած ժամանակ»²⁵։ Ոգեշնչուած պաշտելի քահանայի նման վարքից, Եղիան նաեւ ուշագրաւ ընդհանրացումներ է անում՝ «Որերենի՞ս պիտի չնախանձէինք Քեզի,- գրում է նա,- գիտուններ, նանապարհորդներ կը գտնեն աշխարհները, սակայն աշխարհներն անոնցը չե՞ն, աշխարհն անոնցը չե՞ միթէ, որոնք կ'աշխատինք թշուառութիւնը բառնալ աշխարհէ, դասէ դաս եղբայրութեան ոգին տարածել ու աշխարհները միացնել դասերուն ու անհատներուն միութեամբ»։

Վերջապէս, «սիրայօժար աղքատներուն վեհագոյն դասն», որի անհատները «աղքատ կը մնան սիրայօժար, որովհետև այլոց համար կ'ապրին, ժողովրդիան համար կ'ապրին»: **Նրանք կարող էին նաեւ «դիւրակեցիկ» կամ նոյնիսկ հարուստ լինել,** եթէ միայն իրենց համար աշխատէին ու ապրէին: **Ցաւօք, նմանները երբեմն նաեւ արհամարհում, զրպարտում են իրենց կենդանութեան օրօք, սակայն ժամանակն, ի վերջոյ, ամէն բան իր տեղն է դնում, եւ նրանց «հարիւրին ութսուն, իրենց վախճանին մօտ, իրենց մահինին մէջ, կը յարգուին, կը մեծարուին, կը շրջապատուին»:** **Այդպիսիներից մէկն է եղել նաեւ սոյն քահանան, «որուն ի՛նչ վեհ գործ կատարելն սկսաւ ընդհանրապես նանցուիլ, երբ... իր անձնասէր անշնորհ անարժան քանի մը պաշտօնակիցներու գրեթէ զոհ՝ անկողին ինչկա...»:** **Ահա թէ ինչու նրա թաղումը կատարուեց մեծ շուրջով, ժողովրդի մեծ բազմութեամբ եւ Օրմանեան պատրիարքի մասնակցութեամբ, որ «սրտէն ու հոգիէն խօսեցաւ» իր քարոզը, մինչդեռ «շրբութերէն պիսի խօսէր մենծ Աղայի մը վրայ», որի կեանքն անցել էր «դրամ բառն հոլովելով ու դիզեմ բայը խոնարհելով»: **Իսկ Տէր Խաչատուրն, ընդհակառակը, «գուրք բառն» էր հոլովել ամբողջ կեանքում եւ խոնարիել «օգնել բայն»:** **Եղիան մտահոգ է, սակայն, թէ ի՛նչ է լինելու ժողովրդի վիճակը՝ Տէր Խաչատուրը է,****

25 Անդ, 272-273: Ի դեպ, հենց այս նկատողումով է պայմանաւորուած նաև գրուածքի վերնագիրը՝ «Հայոց Միրիկլը», Տեր Խաչատուրի կերպարի համեմատութիւնը Վ. Հիւգոյի «Թշուառներ»ի սրբակեաց եպիսկոպոս Շառլ Միրիկիի հետ:

չատուրի նման «աղբատահայր քահանաների» կորստից յետոյ, քանզի «ստակը մէկ կողմ դեռ, ու տառապանքը միւս կողմ կը դիզուի, ժպիտը մէկ դասին ու արցունքը միւս դասին բաժինն է դեռ»²⁶: Ի դէպ, նա նաեւ կարեւոր է համարում նշել, որ աւելի է գնահատում սոյն քահանայի գործը, քանի որ ինքը եւս «քահանայի թռո» է՝ «քահանայի մը որ ան ալ քանկ չուներ, այլ տոպրակ»: Ճիշտ է, Տէր Խաչատուրի տոպրակը չունէր Պէշիկթաշի աւագերէց Տ. Յովհաննէս քահանան, բայց մշտապէս նրա կողքին էին Պալեան Կարապետ Ամիրա եւ Տատեան Յովհաննէս պէյ առատաձեռն բարեգործները, որոնք «իրենց տուածին յիշատակութիւնը միա՛յն վերին տոմարին մէջ արձանագրուած տեսնել կը փափաքէին»²⁷:

Արձակ բանաստեղծութիւնների մէկ այլ շաբքում («Աշունը»²⁸, «Ամայութեան մէջ ճայներ»²⁹, «Նուագահանդէս»³⁰) առաւել զգալի են Տէմիրճիպաշեանի անձնական կեանքից բխող զգացողութիւնները, մտորումներն ու տրամադրութիւնները: Ամենեւին պատահական չէր 1898 թուականի վերջերին աշնան թեմայի արծարծումը երիտասարդ տարիքում, 34 տարեկանին, թոքախտից մահացած Փրանսիացի բանաստեղծ Շառլ Միլվուայի (1782-1816) եւ յատկապէս նրա՝ ժամանակին մեծ տարածում գտած «Անկումն տերեւոց» (կամ ինչպէս Եղիան է գրում, «Տերեւաթափ») եղերերգի յիշատակմամբ: «Աշունն եկաւ, աշունը կ'տիրէ, աշունը կ'երկարի', կ'երկարի': աշունը բնութեան, որ Տերեւաթափի բանաստեղծէն ի վեր՝ եղաւ աշունն ալ սիրահալ երիտասարդին, աշունը Միլվուայի՛ն...»: Սառնաշունչ ձմեռից, կենսաւէտ գարունից, այրող ու փոշոտ, հեղձուցիչ ամրանից յետոյ աշունը պարզապէս հմայիչ է թւում անտառին ու բանաստեղծին՝ բերելով իր «անբաղդատելի՛ հրապոյրն, որուն արտայայտութեանը մէջ գերազանցեց Միլվուան, գերազանցելով իր եղերգն ալ գարունի գեղօններն՝ ա՛յնքան գունագեղ ու գեղասիանչ թէեւ»: Ու չնայած աշնան տերեւաթափի, ագռաւների, տերեւների այդ «օդային պարուց սրտայոյգ սգահամակ հանդիսատեսների», կռնչաձայն թաւալումների տակ անտառը «կ'տրոփէ, կը տուայտի, կ'ֆայֆայուի...», բայց այդ ամենի պատկերմանը նուի-

26 Անդ, 273-274:

27 Անդ, 275:

28 ԳՐԱ.ՍԵՐ Ա.ՏՈՒ, Աշունը, ի «Բիւզանդիոն», թիւ 664 (Դեկտ. 23/4), 1899:

29 ԳՐԱ.ՍԵՐ Ա.ՏՈՒ, Ամայութեան մէջ ճայներ, ի «Բիւզանդիոն», թիւ 690 (Յունուար 23/4), 1899:

30 ԳՐԱ.ՍԵՐ Ա.ՏՈՒ, Նուագահամդէս, ի «Բիւզանդիոն», թիւ 771 (Փետր. 17/1), 1899:

րուած Միլվուայի քերթուածը Եղիան համարում է «սիրոյ սրբագոյն բանաստեղծութիւնը», քանզի, ըստ նրա, այդ «կեղերջական եղերգն աննման /.../ Միլվուա միայն կրցաւ թարգմանել մարդկային լեզուին»։ Ահա թէ ինչու, ասես, նրբօրէն ներքին համեմատութիւն անցկացնելով իրենց կեանքի աշունն ապրող բնութեան՝ անտառի, եւ բանաստեղծի միջեւ, գրութիւնն աւարտում է զարմանքի, բայց նաև հիացմունքի յուսադրիչ տողերով։ «Անտառն, հաւատալի^o բան է, ամբաւ անքացատրելի հանոյքով կ'վայելէ իր քայլերգաւոր քայքայումը, կ'նաշակէ իր յամբ յոլովամաշ հիւծումն՝ որուն բնութեան բոլոր նուաղուն զօրութիւնք իրենց նպաստի բաժինը կ'քերեն հոգետա՞նը գուրգուրանօֆ...»։

Նման տրամադրութիւնը, թերեւս, միանգամայն ըմբռնելի է՝ նկատի ունենալով, որ Եւրոպական ուղեւորութիւնից յետոյ անգամ Եղիայի առողջական վիճակը, մեղմ ասած, լաւատեսութեան յոյսեր չէր ներշնչում։ Հստ էութեան, նա զգում էր իր կեանքի մօտալուտ մայրամուտը եւ սկսել էր նոյնիսկ... երգիծանքով ու հեգնանքով մօտենալ այդ խողըին։ Ահա թէ ինչու 1899ի սկզբին հրապարակած «Նուագահանդէս»ի գրական տեսակը փակագծում բնորոշուել էր որպէս «Քմազգայնիկ դիցագներգ», իսկ բովանդակութիւնն աչքի էր ընկնում երգիծական տարրերով։ Դա նկատելի էր ինը «երգ»երից բաղկացած «դիցագներգի» հէնց առաջին տողերից։ «Այս առաւօտ դեռ Մորփեոսի գրկացը մէջ էի։ Բարերարդարար Մենով Որփեոսի թեւերը լոկ... թեւային, այսինքն օդային են, գրում է նա,- ապա թէ ոչ չը գիտեմ տաքութիւնս կամ տենդս ո՞ր ասսինանին հասած պիտի ըլլար չաստուածոյ մը (գոնէ՛ չաստուածուի ըլլար) գրկացը մէջ» (այս եւ յաջորդ ընդգծումները մերն են – Պ. Դ.): **Մորփէոսի գրկից, սակայն, նրան խլում է նամակաբերի դրան թակոցը։ Նամակը, որ ստորագրել էին «իրենց կրթասիրութեամբ ու գրասիրութեամբ ծանօթ Տիկին մը եւ Օրփորդ մը», հրաւէր էր «ազգային մեծ Հիւանդանոցից», ինչի վկայութիւնն էր «Յերփակ տոմսակն ալ», որի տառերի «անհաւատալի՛» խտութիւնը արդէն իսկ մատնում էր «գրոյն նիւթը», քանի որ խիս էր այնպէս, «ինչպէս որ է խի՛տ մեր ազգային մեծ Հիւանդանոցը հիւանդերով եւ... ամեն տեսակ հիւանդութեանց candidatներով»։ Հրաւիրում էր «Հիւանդանոցին ի նպաստ տրուելիք նուագահանդէսին»։ Նուագահանդէսի գաղափարը, ըստ էութեան, բանաստեղծուհի Անայիսինն էր. մէկ-երկու ամիս առաջ իր մի գրութեան³¹ մէջ՝ պատմելով ամերիկան**

31 ԱՆԱՅԻՍ, Նուագահանդէսը (Խշագրաւ առաջարկ մը), ի «Բիւզանդիոն», թիւ 632, նոյ. 16/28, 1898:

քոլեջում տրուած այդպիսի հանդէսի մասին, նա խոստովանում է, որ հէնց այդտեղ՝ «երաժշտութեան հեշտօրօր ազդեցութեան տակ, որ մեր մէջ կ'արթեցնէ մանաւանդ սիրոյ և գրութեան զգացումներն, յանկարծ գաղափար մը ծագում առաւ մտիս մէջ։ Մարդկային ցաւերու և տառապանելերու վրայ խորհած ատենս յիշեցի հիւանդներն ու անոնքներն, յիշեցի անոնք որ վայելք չունին, անոնք որ զրկեալ են, անոնք որ որբ են, անոնք որ մեր գրութեան կ'կարօտին, անոնք որ կ'մեռնին՝ կ'յուսահատին եթէ մեք չօգնենք իրենց, յիշեցի մեր Հիւանդանոցի հեք պատսպարեալներն» եւ... առաջարկում է այստեղ եւս նման մի նուագահանդէս կազմակերպել հիւանդների համար։

Եղիայի առաջին արձագանքը տոմսակին այն էր, թէ աւելի լաւ չէ՞ր, որ իր ներկայ ընչազուրկ ու տկար վիճակում «այդ փափուկ գրոյն» փոխարէն «գոնէ կէս տասնեակ Պանքայի տոմս» ընդունէր, թէկուզեւ «ամէն ամիս եօթանասուն ութսուն խոշոր բանիք շարժող կոշտ ձեռքով մը գրուած...»։ Եւ միթէ, նրա համոզմամբ, «ազգին բարերարներուն պարտքը չէ՞ր» իրենց «զրոսանելի մեծագումար ծախտէն» իրեն էլ մի բաժին հանել՝ «զրոսանելի ծախուց համար»։ Մանաւանդ՝ «Տղո՛ւ... մը զրոսանեն ալ ի՞նչ պիտի ըլլայ.- Պատկերներ, պատկերազարդ Հանդէսներ գնել ու բդրատել»։ Ակնարկելով ժողովրդական խօսքը, թէ «զդոտին աչքը ջուրի պէտք ունի», իսկ իր տան առջեւով ոչ մի ջուր չի անցնում, Եղիան՝ հեգնանքի թեթեւ հնչերանգով, երազում է, թէ «Ջրոյ բացակայութեան, գէ՛ք ըլլային ջրաներկ պատկերներ, մելանակերտ լիներ, բդրակարկառ լեներ՝ որոնց գագարէն դարձնեալ ջուրը կ'հոսէ... բուղթի վրայ»։ Աստիճանաբար զարգացնելով երեւակայութեան այդ խաղը, նա անցնում է նաեւ ինքնահեգնանքի, որ, սակայն, դառն ու ցաւոտ ճշմարտութիւն էր պարունակում իր մէջ։ «Եւ ես ալ, որ կերպի իւիք բուղթէ իւնենդ մըն ես՝ որուն խենդութիւնն – աւելորդ է ըսել – բուղթէն յառաջ եկած բուղթի խենդութիւն կամ բուղթէ խենդութիւն է. ես ալ՝ կ'ըսեմ՝ պէ՛տք էր որ քունէն աւելցած մէկ երկու ժամն անցընելի դիտելով, զոր օրինակ, Ալիսի, Միսիսիփիի, Դանութի, Ուրմիոյ, Չատի, Լեմանի պատկերները»³²։

32 Մեկնաբառնելով այս «բուղթէ խենդ մըն եմ» արտայատութիւնը, Սիրան նոյշ Դրյանանը գրում է, թէ «Եղիայի համար Աստուած յօրինող է։ Եւ, ուրեմն, բացակայող յօրինողի փոխարէն յայտնում է ինքը, ով սկսում է ուրեմն յօրինել, որոնք իրար ենտ անվերջօրէն խօսակցութեան մէջ են։ Խօսենք յօրինել, որոնք իրար ենտ անվերջօրէն խօսակցութեան մէջ են։ Խօսակցում են բդրի վրայ, յօրինում են բդրի վրայ։ Ահա թէ ինչու յետոյ Եղիա իր խենթութիւնը կը կոչի «բուղթի խենդութիւն»։ ոչ որովհետեւ որ գրում էր, գրականութիւնն այդ է արդէն, ոչ այլ բան, այլ որովհետեւ

Երրորդ երգում Եղիան դարձեալ անդրադառնալով՝ իր հիւանդութեանը, հարցում է անում Մուսային (որին, ի դէպ, «աշխարհագէտք ոչ Յունաստանի եւ ոչ ուրիշ երկիրներու եւ ո՛չ մէկ լերան գագարը գտան»), բայց որի հաւատքը, այնուամենայնիւ, իր նման «տղայական միտքերու մէջ կենդանի է»), թէ «հոգիս՝ ըստ Սաղմոսերգուին՝ ցմահ տրսում եղած ժամանակ, այս դիւային ջղոտութիւնս ուսկի՞ց կուգայ...»։ Մուսայի պատասխանը, ըստ էութեան, հէնց ի՛ր՝ Եղիա Տէմիրճիպաշեանի պատասխան-մեկնաբանութիւնն է տրուած հարցին՝ «Ես ալ կարծեցի՛ որ Ալֆուս ար Միւսէն է զիս կանչողը, երեխտասաներորդ ամսոյն գիշերը³³ գրելու համար»։ Շարունակութիւնը դարձեալ Երգիծական ոճի մէջ է՝ «Դո՞ւն ես եղեր. կորսուէ՛, ինե՛նու... Խենդութիւնդ ինծի՞ կ'հարցնես՝ ուսկի՞ց կուգայ։ Ստուգարանական բառարանն ամբողջ ըլ հրատարակուեցա՞ւ. խենդութեան արմատը փնտուէ հոն ու կը գտնաս...»։ Այս առաջարկին բանաստեղծի պատասխանը (ի դէպ, նոյնպէս Երգիծական հնչերանգով) արդէն ամէն բան դնում է իր տեղը՝ «Բառարանը նայեցայ, Մուսայ. Գտայ, քով քովի կեցած, ինչպէս այր եւ կիմ՝ ապահարզանէն առաջ, խենդ = ինծի»։ Եւ... արդէն լուրջ ու կարեւոր շեշտադրմամբ՝ «Արմատը գիտեմ. բայց դարմա՞նը...»։ Բնականաբար, չբաւարարուելով Մուսայի պատասխանից, Եղիան նշում է, որ, թերեւս, իմաստ չունէր «լեռները փախած» անգտանելի Մուսային կամ Մուսաներին հարցում անելու, քանզի իր հիւանդութիւնը նոր չէ եւ արդէն «պատկառելի հենութիւն մ՛ունի», նոյնիսկ տարիներ առաջ «Ազգային կենդրոնական Վարչութեան Ռւսումնական Ժողովոյ ուսուցիչներու Քննիչ Յանձնաժողովովոյն (Երկա՛ր է եղեր այդ յանձնաժողովին անունը) վերջընթեր նասին մէջ», ուր, ի դէպ, հրաւիրուած է եղել «աներկրայ զանազանութեան համար», «Հայ Բժշկաց ակադեմական կենսագիր Տօֆք. Վահրամ Թորգումեանը» յայտարարել է՝ «առանց անշուշտ օրակարգէն շեղած ըլլալու», թէ «զդային հիւանդութիւններն ամէնէն աւելի յաջողութեամբ կ'դարմանուին... նուագարուժական եղանակաւ»։ Աւելին՝ Վ. Թորգումեանը ժամանակ առաջ՝ դեռևս իր մանկութեան շրջանում այն կիրառել է իր նկատմամբ,

այդ խենթութիւնը յօրինումից չի անցնում ստեղծումի, մնում է որպէս թուղթ կամ թղթերի շարան։ Յօդաւորման, համակցման անհնարինութիւն» (Տէմիրճապաշեսն Ե., «Անգեղեղ երգ», 435)։ Կարծում ենք, նման մեկնաբանման մէջ, ըստ էութեան, հաշուի չի առնուել վերը նշուած հեղինակային հեգնական-ինքնանկնական, տեղ-տեղ նաև երգիծական ոնի առանձնայատկութիւնը։

33 Նկատի ունի Միւսէի «Մայիսի, Օգոստոսի գիշերթեր»ը։

սակայն... «Բազում առաջին փորձերու պէս,- արձանագրում է Եղիան,- այդ նուագարուժական նախափորձն ալ յաջողեցաւ ոչ. նոյն իսկ հակառակ արդիւնքն առաջ բերաւ՝ ջիղերս (եւ ոչ միայն իմ) աւելի գրգուելով»: Նկատելով այդ, նրբազգաց դոկտորը՝ «աղերասահայց ակնարկ մը» նետելով մանկավարժուհի Մատակեանին, թելադրում է նրան «իրագիտական կամ հոգեբանական» դասախոսութիւն կարդալ հիւանդին՝ յուսալով, որ «իգական ճայնի մը (որքան ա' կովկասական առնականութիւն մ'ունենար այն) ազդեցութիւնը փրկաւէտ պիտի ըլլար... հիւանդ ջիղերուս»:

Եւ ահա՝ «Դուն քուն, բաղդդ արքուն», տարիներ շարունակ իրեն անտեսելուց յետոյ, բախտը վերջապէս այդ առաւօտ թակել էր Եղիայի դուռը՝ «Տիկին Մանուկեանի եւ Օրիորդ Գուանի ճայնի, Ատենապետուհետյն» Տիկին Աղասեանի ճայնով աւելի սրտազդեցիկ դարձած, զիս հրաւիրեցին... բժշկութեան,- գրում է նա՝ նոյն երգիծական հնչերանգով:- Զուրց հոսանք կ'փնտուիր, ահա ֆեզի նուագաց հոսանք, ուր առատապէս ջուր ալ կայ, քանի որ՝ Գերմանացւոց մեծագոյն բանաստեղծին բացատրութեամբ՝ մարդուս հոգին կ'նմանի ջուրին»: Այլեւս զղջում է, որ մերժել է «գրութեան նուագահանդեսին հրաւիրը»: Զէ՝ որ դա նաեւ ի՞ր համար էր. մի՞թէ «հազարումէկերորդ հիւանդը» չէ՞ր ինքը, մի՞թէ հէնց վիշտը, տրտմութիւնը, տառապանքը չէր, եւ մի՞թէ ինքը «այն գրութեան հրեշտակներուն մէջ» մայր չունէր, քոյր չունէր, դուստր չունէր, քանզի՝ «բոլոր ա'յն կանայք եւ աղջկունք, որոնց աշուրներն երկինք կ'վեցնեն իմ գրուածներս, իմ դասերքս չե՞ն»:

Եւ ահա՝ նոր ոգեշնչմամբ, Եղիան նուագասրահում է: Հնչում է գաշնակի, սրնգի, տաւիդի հոգեթով երաժշտութիւնը՝ «Եւ ոսկը հոգի կ'ըլլայ ու թելը մեղեդի»: Ու հոգին կ'նչէ թէ այս աշխարհս անձուկ է, ու սիրտը կ'հեծէ թէ սէրը վաղանցուկ է...»:

Այնուամենայնիւ, դիւցազներգն աւարտում է տրտմագին տողերով՝ «Ո՛չ, Տօքթօ՛ն, բարէ՛...»: Նուագարուժական եղանակն ալ անյաջող եղաւ»: Որովհետեւ, արձանագրում է Եղիան, իր ու իր նմանների հիւանդութիւնը սովորականներից չէ: Մուսայի օգնութեամբ վկայակոչելով նաեւ համաշխարհային գրականութեան շատ մեծերին, հաստատում է, որ դա հէնց, այսպէս կոչուած, «դարի հիւանդութիւնն» է, որ, ցաւօք, «անբուժելի է»: Բայց նաեւ անյուն սափելի, նակատագրական ու մինչեւ իսկ... ցանկալի, քանի՝ «եթէ սափելի, նակատագրական ու մինչեւ իսկ... ցանկալի, քանի՝ «եթէ բժշկուի, ո՞վ արցունք պիտի խլէր ընթերցուիհներուս աչքերէն...»:

Summary

YEGHIA DEMIRJIBASHIAN'S PROSE POEMS

PETROS DEMIRCHYAN

The 170th anniversary of Yeghia Demirjibashian one of the most unique figures in the Armenian thought – a Western Armenian writer, publicist, philosopher, pedagogue, editor was celebrated. Today it is intolerable that the personality and work of Yeghia (by the way, not only his, but also a number of other great people) has been left out of the foundation of the native literary and cultural development for decades. It is enough to say that a century after the great writer's death, only four more or less complete collections of his many and varied works were published in the literary press of the time: "Prose pages, letters, verses" (Paris, 1955), "Works" (Yerevan, 1986), "Hrayrk in the dark" (Istanbul, 2008) and most recently, "Angel song" (Yerevan, 2015). The full story of the writer's personality and work is also still waiting for his zealous researcher. Meanwhile, Yeghia Demirjibashian is a special phenomenon in the history of Armenian literature, in particular, in the sphere of our national-social, educational-cultural development in the last quarter of the 19th century.

Prose poems have a special place in Yeghia Demirjibashian's literary genre, some of which are undoubtedly one of the most significant values of the genre.

Since 1897 to 1898, Yeghia, suffering from a severe nervous illness for many years, traveled to a number of European countries, including Switzerland, Austria, and Hungary. According to the writer's relative: poet Zaruhi Galemkyaryan's witness, the departure took place on the "advice of doctors", though the relative regrets that it did not help Yeghia, because "his pain remained incurable there" (GALEMKYARIAN, Z., *Yeghia Demirjibashian*, in "*Anahit*", 1931, number 5-6, 107). However, after returning to Constantinople, he again began to take an active part in literary life, being published in the press, this time mainly in the already well-known "Byzantium" national-political, literary-scientific daily founded by Byuzand Kechyan in 1896.

In the autumn of 1898 and the beginning of 1899, Yeghia Demirjibashian appeared in "Byzantium" with verses, prose poems, essays, theoretical articles on language and literature.

Some of the publications are especially noteworthy for their travel impressions, feelings and thoughts, which are not just descriptions specific to trav-

logues, but profound psychoanalytic prose poems using wonderful stylistic and linguistic means of expression, which have given rise to many evidences of sincere admiration.

Such wonderful examples are “Our Posfor”, “Meeting on the Mountain”, “Vehanoush”, “Armenian Miriel”, “Autumn”, “Voices in Desert”, “Concert” graceful works.